ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԿ-8-Ա **2025թ. դեկտեմբերի 11**
ք Երևան

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 8.3-րդ մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 33-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 34-Ն որոշմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգի 16-րդ կետի 11-րդ ենթակետով՝

1. Սահմանել 2025 թվականի ամենամյա պարտադիր ատեստավորման անցկացման երկրորդ փուլին մասնակցած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների կրկնակի ատեստավորման անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. Հովակիմյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի
2025թ դեկտեմբերի 11-ի ՆԿ-8-Ա հրամանի

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

N	ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐ	ՍՏՈՒԳԱՐՔԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԺԱՄԸ	ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ
1.	12.01.2026թ.	14:00	Օսիպյան Արթուր Կառլենի –Թիվ 10 ԸԸՀ Պետրոսյան Արմեն Գրիշայի- Թիվ 6 ԸԸՀ Գրիգորյան Բորիս Լևի – Թիվ 3 ԸԸՀ Գալստյան Տիգրան Հովհաննեսի – Թիվ 1 ԸԸՀ